ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԻՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԱԼԵՔՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱՎԱՆԴ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ՈՂՋՈՒՅՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԱԼԵՔՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

Պատմական բարի ավանդություն է արդեն, որ հայ եկեղեցին ուրախությամբ լուսավորվում է ամեն անգամ, երբ ռուս պրավոսլավ սուրբ եկեղեցին տոնական օրեր է ապրում փառավոր հանդիսություններով:

Այսօր, երբ Ձերդ Սրբությունը նախագահում է Ձեր մեծ եկեղեցու պատրիարքության վերականգնման հիսնամյակը, Մենք եղբայրաբար երջանիկ ենք Ձեզ շնորհավորելու և հոգեպես մասնակցելու Ձեր տոնախմբության:

Թող Աստված անսասան և միշտ փառքի մեջ պահպանի ռուս պրավոսլավ սուրբ եկեղեցին և նորա պատրիարքության պատմական սուրբ Աթոռը, խաղաղության և հոգևոր լուսավոր ծաղկումի մեջ՝ ի մխիթարություն ռուս աստվածասեր ժողովուրդին և հուրախություն մեզ բոլորիս:

Թող Աստված քաջառողջ կյանք շնորհե Ձերդ Սրբության, որպեսզի Ձեր քաղցր հոգիով, Ձեր արդար խղճով և Ձեր բարձր հեղինակությամբ շարունակեք առաջնորդել Ձեր եկեղեցին և Ձեր ժողովուրդը երկար տարիներ:

Փառք և հավերժ լույս ձեր սուրբ Աթոռին և Ձերդ Սրբության:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով, զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ», ամեն (Հռոմ. ԺԵ 13):

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տվավ կոնդակս ի 25 ապրիլ
1968 փրկչական ամի,
ի և տումարիս հայոց ՌՆԺԷ,
ի մայրավանս սրբո Էջմիածնի:
ՀՄՐ. 637